ԱԶԳԱՅԻՆ·

Ամսոյս 14-ին Սինոդի Նախանդամ Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս ըստ հրահանգութեան, որ կոնդակով հաղորդել էր Նորին Սրբազնութեան Վեհափառ Հայրապետն ազգիս՝ Ս. Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը հետն առած գնաց Ճեմարան, ուր սերտարաններից մինում խմբուած էին Ճեմարանի աշակերտները. Պատշաճաւոր աղօթքից յետոյ կարդացուեց Վեհափառ Հայրապետի Կոնդակը, որով Պ. Արշակ Նահապետեան կարգվում էր Տեսուչ Ճեմարանի.

Հանդիսադիր Գեր. Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոս կոնդակի ընթերցումից յետոյ պատշաճաւոր բանախօսութեամբ օրհնեց Ճեմարանի աշակերտներին ու վարչութեանը և Վեհափառ Հայրապետի կոնդակը յանձնեց Տեսուչ Պ. Նահապետեանցին.

—

Ամսոյս 20-ին, 5½ ժամին ընդերեկս Վեհափառ Հայրապետն ազգիս ողջամբ ժամանեց ի Մայր Աթոռս Բիւրականի Հայրապետական ամարանոցից.

Նորին Վեհափառութեան ընդառաջելու համար երեկոյեան ժամերգութիւնից յետոյ միաբանութիւնը և Ճեմարանի աշակերտք իրանց ուսուցիչներով հիւսիսային արտաքին դրան մօտ կանգ առան. սկսեցին խոնարհել և ժողովրդեան բազմութիւն. Վեհափառ Հայրապետը կառքից իջնելով յաջմէ և յահեկէ խոնարհալ ժողովրդեան օրհնութիւն բաշխելով միաբանութեան և աշակերտաց նուիրնթացութեամբ մտաւ Տաճարը. Ս. Իջման խորանի առաջ լռելեայն աղօթեց և ապա ժողովրդեանը «պահպանիչ» աղօթքով օրհնելուց յետոյ՝ գնաց Վեհարան.

Հետևեալ առաւօտ նախ քան Ս. պատարագը միաբանութիւնը ներկայացաւ Վեհափառ Հայրապետի ի շնորհաւորութիւն գալստեան Նորին Վեհափառութեան. Նորին Վեհափառութիւնը միաբանութեան աջ տալուց յետոյ հաճեցաւ շնորհակալութիւն յայտնել որ միաբանութիւնը, իւր բացակայութեան ժամանակ, հոգևոր միաբանական կոչման վայել է անցրել. շնորհակալութիւն յայտնեց Գերապատիւ Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսին, որ նա իւր պատուէրին համեմատ՝ լաւապէս է հսկել միաբանութեան արտաքին կարգապահութեան վերայ. շնորհակալութիւն յայտնեց լուսաբարապետ Գերապատիւ Երեմիա եպիսկոպոսին, որին յանձնուած էր միաբանութեան ներքին, եկեղեցուն վերաբերեալ կարգապահութիւնը. շնորհակալութիւն յայտնեց Գերապատիւ Ներսէս եպիսկոպոսին, որին յանձնուած էր Ճեմարանի վերայ հսկողութիւնը. Վեհափառ Հայրապետը նախքան ամարանոց գնալը ի ներկայութեան միաբանութեան ի միջի այլ և այլ պատուէրների՝ պատուիրեց եկեղեցական զգեստները, որոնք Թանգարանի խոնաւութիւնից կարող էին վնասուել, դուրս հանել և փռել որ չորանան, այս մասին վերահսկողութիւնը յանձնած լինելով Գեր. Յովակիմ եպիսկոպոսին՝

իւր պատուէրի անթերի կատարման համար։ Նորան ևս շնորհակալութիւն յայտնեց։

Միաբանութիւնից յետոյ Վեհափառ Հայրապետի ողջամբ վերադարձը շնորհաւորելու համար ներկայացան Նորին Վեհափառութեան Վաղարշապատի քահանայքը՝ առաջաւորները և Ճեմարանի ուսուցիչք։

Նոր Նախիջևանցի Մեծ. Պարոն Յակոբ Մատթէոսեան Խլտճեանց եկած լինելով ի Մայր Աթոռս, ի նպաստ վերանորոգութեան Մայր Տաճարին նուիրեց 500 բուրլի։

Շնորհակալութիւն Մեծապատիւ Պարոնին՝ որ իւր ուխտը արդիւնաւորեց յիշեալ նուիրատուութեամբ։

Աղօթումենք առ Աստուած իւր անհուն բարերարութեամբ լարեալ լցնել յիշեալ բարեսէր անձի տունը։

—

Ճեմարանի բացման ԺԳ. տարեդարձը կատարուեց ըստ այսմ։

Ամսոյս 27-ին Ս. Պատարագից յետոյ Մայր Աթոռոյս Միաբանութիւնը կատարեց երջանկայիշատակ Գէորգ Դ.-ի գերեզմանի վերայ հոգեհանգիստ, այնուհետև թափօրիւ գիմեց Ճեմարան, նորա ԺԳ. բացման տարեդարձը կատարելու, չընայելով օդի խստութեան, բաւական ուխտաւորներ կային ներկայ թէ՛ հոգեհանգստեան և թէ՛ տարեդարձի հանդիսին։ Պատշաճաւոր երգերից յետոյ Պատարագիչ Գեր. Արիստակէս Եպիսկոպոս մի գեղեցիկ ատենաբանութեամբ յայտնեց երջանկայիշատակ Հիմնադրի մեծագործութեան բուն նպատակը, որ էր ըստ իւր Սրբազան նախորդաց ջանից Ճեմարանով Հայ եկեղեցւոյն ընտրելագոյն ժառանգաւորներ հասցնել, յուսալով որ Հիմնադրի նպատակը իրագործուած կըլլինի Ճեմարանի սաների ազգին ծառայելովը հոգևորական և ուսուցչական դասպարիզում. յայտնեց նաև որ ներկայ Վ.Ե. Հայրապետն իւր ուշադրութեան առարկայ ունելով Ճեմարանն, կաշխատի որ ոչ միայն ընտիր ուսուցիչներ հասցնել Ճեմարանով այլ և ընտրելագոյն հոլիւներ. ապա «Պահպանիչով» վերջացաւ հանդէսն։

—

Վանեցւոց ոմանց կրօնափոխութեան ծանուցեալ խնդրի առիթով կարգումենք Փունջ լրագրի 2005 թիւ Օգոստ. 2 ամսաթերթի մէջ հետևեալը։

— Պատրիարքարանէն

«Կրօնական Ժողովն Ազգային կեդր. վարչութեան ի բուժումն գայթակղեալ մտաց հայ ժողովրդեան հարկ և արժան կը դատի տալ ի հրատարակութիւն Վանայ գաւառին 12 քահանայից մի հերքմնագրոյն վաւերական պատճէնն, որ հետևեալն է.

«Ամենապատիւ Սրբազան պատրիարք Հայր՝ նախագահ կեդրոնական Ժողովոյ կեդրոնական վարչութեան

է կ. Պոլիս.

«Ստորագրեալ քահանայքս՝ Արևելք Օրագրի 744 թուոյն մէջ Վանեցի երից քահանայից ի հոռմէականութիւն դիմելու վերաբերութեամբ անհիմն հրատարակութիւն մը տեսնելով՝ պարտք համարեցինք հերքել այն լուրը, յայտարարելով, որ Վանայ քահանայից մէջ գիտելի և լսելի իսկ եղած չէ ի կրօնափոխութիւն դիմելու այդպիսի գաղափար մը.»

«Վան որոյ ի միամտութիւն ժողովրդեան և ի պատիւ քահանայական դասուն, փութացինք զայս հերքման գիր ուղղել առ Ձերդ բարձրաշնորհ սրբազնութիւն. խնդրելով տնօրինել որ ինչ արժանն է.»

Հարգանաց պարծանքով հայրապետական [illegible] է Վան. Դիոնէսիոս քահանայ, Յակոբ քահանայ, Կոմէտաս քահանայ Կունէյեանց Նորշէնու, Պօղոս քահանայ սուրբ Վարդանայ, Յովհաննէս քահանայ Աւանուց, Սարգիս քահանայ սուրբ Սահակայ, Մանուէլ քահանայ սուրբ Պողոսայ, Յակոբ քահանայ, Յովհաննէս քահանայ Հայկավանից, Կարապետ քահանայ սուրբ Վարդանայ, Պետրոս քահանայ Արալուց, Արիստակէս քահանայ սուրբ Նշանայ.

Վերոյիշեալ ստորագրութեանց անկեղծութեանը համար վկայելով կը ստորագրեմ

Առժամանակեայ Առջ. Տեղապահ Վանայ
Յովհաննէս վարդապետ Մաժակունի

1886. Յուլիս 15
Առաջնորդարան Հայոց ի Վան.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 1 Օգոստոսի ընդ համարաւ 415 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկդասեան արականաց և միդասեան օրիորդաց Հայոց Համախուց պատուելիք՝ Հայրապետ բէկն Մարտամեանց, Ստեփան բէկն Գեօգչայեանց, Աղէքսանդրն Զաքարեանց, Շահնշահն Վլասեանց և Յովհաննէսն Խալափեանց.

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի ազգիս ի 10 Օգոստոսի ընդ համարաւ 427 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական երկ-